ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

ՀՐԱՄԱՆ

05 հոկտեմբերի 2020 թվականի N 111-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 13-Ի N 63-Լ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 13-ի N 1532-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ կետով և «Պետական վերահսկողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության կազմում ստեղծել քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ և հաստատել դրանց անհատական կազմը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության քաղաքացիական պաշտպանության կազմավորումների գործառույթները՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ղեկավարներին՝ խմբերում ընդգրկված անձնակազմի հետ պարբերաբար անցկացնել պարապմունքներ և ապահովել խմբերի գործառույթների կատարման մշտական պատրաստությունը:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության ղեկավարի 2019 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության կազմում քաղաքացիական պաշտպանության

կազմավորումներ ստեղծելու և դրանց անհատական կազմը հաստատելու մասին» N 63-Լ հրամանը:

5. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության գլխավոր քարտուղարին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Ռ. ԶԱՔԱՐՅԱՆ

10/5/2020

X

ՌԱՖԱՅԵԼ ԶԱՔԱՐՅԱՆ

Signed by: ZAKARYAN RAFAYEL 4005860638

Հավելված 1
ՀՀ պետական վերահսկողական ծառայության ղեկավարի
2020 թվականի 10 ի 05 -ի N 111-Լ հրամանի

Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության քաղաքացիական պաշտպանության կազմավորումների անհատական կազմը

1. Փրկարարական խումբ

Ռոման Ալավերդյան	ՀՀ պետական վերահսկողական ծառայության ղեկավարի խորհրդական (խմբի ղեկավար)
Դավիթ Մուրադյան	ՀՀ պետական վերահսկողական ծառայության տնտեսական ոլորտի վերահսկողության ոլորտի գլխավոր վերահսկող
Վազգեն Հարությունյան	ՀՀ պետական վերահսկողական ծառայության գնումների գործընթացների վերահսկողության վարչության գլխավոր մասնագետի պաշտոնակատար
Արսեն Ալախվերդյան	ՀՀ պետական վերահսկողական ծառայության պետաիրավական ոլորտի վերահսկողության գլխավոր վերահսկող
Կարեն Մարտիրոսյան	ՀՀ պետական վերահսկողական ծառայության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ոլորտների վեևահսկողության վարչության գլխավոր վերահսկող
Էդգար Բաղդասարյան	ՀՀ պետական վերահսկողական ծառայության մոնիթորինգի և վերլուծության վարչության գլխավոր մասնագետի պաշտոնակատար

2. Հետախուզական խումբ

Արամ Մովսիսյան	ՀՀ պետական վերահսկողական ծառայության կարգապահական և ներքին հսկողության բաժնի պետի պաշտոնակատար (խմբի ղեկավար)
Արթուր Հայրապետյան	ՀՀ պետական վերահսկողական ծառայության կարգապահական և ներքին հսկողության բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար
Միխաիլ Արզումանյան	ՀՀ պետական վերահսկողական ծառայության կարգապահական և ներքին հսկողության բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար

3. Առաջին օգնության խումբ

Մարգարիտա Պողասյան	ՀՀ պետական վերահսկողական ծառայության գործերի կառավարման և գնումների կազմակերպման բաժնի պետ (խմբի ղեկավար)
Ալլա Հովհաննիսյան	ՀՀ պետական վերահսկողական ծառայության անձնակազմի կառավարման բաժնի բաեվարքության հարցերով կազմակերպիչ
Նոննա Խաչատրյան	ՀՀ պետական վերահսկողական ծառայության անձնակազմի կառավարման բաժնի ավագ մասնագետ

ՀՀ պետական վերահսկողական ծառայության ղեկավարի
2020 թվականի ___10___ի 05-ի N 111-Լ հրամանի

Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության քաղաքացիական պաշտպանության կազմավորումների գործառույթները

1. Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության քաղաքացիական պաշտպանության կազմավորումներն իրականացնում են հետևյալ գործառույթները.

1) Փրկարարական խումբն իրականացնում է.
ա. խմբի շարժման ճանապարհների և փրկարարական աշխատանքների իրականացման շրջանի հետախուզություն,
բ. հրդեհների մեկուսացում և մարում փրկարարական աշխատանքների իրականացման շրջանում և մատույցներում,
գ. տուժածների որոնում և նրանց դուրսբերում վնասված և հրդեհվող կառույցներից, փլատակների տակից, օդի ախտոտվածությամբ սենյակներից,
դ. վնասված շինությունների բացում և այնտեղ գտնվող մարդկանց փրկում,
ե. տուժածների և փրկվածների տեղափոխում անվտանգ տարածություններ:

2) Հետախուզական խումբն իրականացնում է.
ա. տարհանման ուղիների հետախուզություն,
բ. հրդեհների օջախների, փլատակների, օդի ախտոտվածությամբ սենյակների հայտնաբերում,
գ. մարդկանց որոնում վնասված կառույցներում:

3) Առաջին բուժօգնության խումբը.
ա. իրականացնում է սանիտարահամաճարակային վիճակի հսկողություն շինություններում և պաշտպանական կառույցներում,
բ. ցուցաբերում է առաջին օգնություն տուժածներին,
գ. տեսակավորում է տուժածներին՝ հետագա բուժօգնության հերթականությունը որոշելու համար,
դ. աջակցում է բուժաշխատողներին տուժածներին բժշկական օգնություն ցուցաբերելիս: